

ՃԱՏ ԽԱԽՈՒՑ ՀՐԱԴԱԴԱՐ

ՀԱՅԻ ԵՒ ՎԱՌԵԼԱՆԻԻԹԻ ԱԻԵԼԻ ՍՈՒՐ ՏԱԳՆԱՊ

ՁԻԻՆԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐԳ ՄԸ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ

մանապահները Նախիջևանին կը հեռանան, տեղւոյն վրայ ձգելով իրենց գէնքերն ու զինամթերքը:

Հոկտեմբեր 1-էն կէս առ կէս յաւելում կը կրեն երկաթուղիի սակերը, թէ ճամբորդներուն եւ թէ բեռներու համար: Իսկ Հոկ. 4-էն, Հայաստանի օդային բորքը զիծերու տոմսերու զինքը կ'աւելնան 1,5 անգամ: Իբրեւ պատճառ ցոյց կը տրուի վառելանիւթի զինքերու բարձրացումը: Ցամաքային փոխադրամիջոցներու կապակցութեամբ առայժմ որեւէ որոշում չէ տրուած:

Մարդասիրական նպատակներով Միացեալ - Նահանգներու կողմէ զրկուած 60 հազար թոն հացահատիկը շատ դժուար պայմաններու մէջ է որ կը բեռնաթափուի Պաթում, նախ օդի աննպաստ պայմաններու հետեւանքով, յետոյ նաեւ անոր համար որ բեռը հասցնող հսկայ նաւը չէ կրցած մտնել նաւահանգիստ: Տասը օրուան ընթացքին միայն 9 հազար թոն կարելի եղած է պարպել: Մինչ այդ Հայաստանի մէջ հացահատիկի տաղնապը սուր կը մնայ: Պաթումի նաւահանգիստը Հայաստանի համար 30 հազար թոն կուտակուած հացահատիկը առաքումի կը սպասէ: Այս փոխադրութեան կապակցութեամբ Պաթում դացած են Գաղիկ Շահպաղեան եւ Արա Սահակեան: Տեղատարափ անձրեւներն ալ արգելք են որ հացահատիկը բեռցուի:

խախտումներ կային: Կիրակի օր, Ազերիները յաջողած էին Զլըրան զիւզը (Մարտակերտի հարաւարեւելքը) գրաւել, բայց, նման «գրաւումներ» յաճախակի են շրջանին մէջ եւ երկար չեն տեւեր, զիւզեր կան որ նոյն օրուան մէջ իսկ ձեռքէ ձեռք կ'անցնին:

Քոքիսիէն տը Փարի ալ (Սեպ. 28) կ'արձագանդէր Ազերիներու ուժակոծութիւններու՝ հրադադարէն ետք:

Այս հրադադարէն առաջ ալ Սեպ. 25-ին, ԳՈ-ի նախագահի Ա. տեղակալ Արա Սահակեանի գլխաւորած Հայաստանի պատուիրակութիւնը Կապանի շրջանի Եղվարդ զիւզի մէջ հերթական հանդիպում ունեցած էր Ազերիներու պատուիրակութեան հետ, զոր կը գլխաւորէր ԳՈ-ի փոխնախագահ Ճալիլով: Քննարկուած են հրադադարի, Բաքու - Երեւան երկաթուղիի վերականգնման, Հայաստանին համապատասխան բաժնին յատկացումով Ադրբեջանին Նախիջևանին կազմի եւ Երկտրականութեան մատակարարման առնչուող հարցեր: Արձանագրուած է որ ի բաց առեալ առանձին միջադէպեր, ընդհանրապէս կը յարգուի Սեպ. 21-ի հրադադարը: Որոշուած է նաեւ հինգ օրուան պայմանաժամի մէջ առաջարկներ ներկայացընել՝ երկաթուղիի վերաշինութեան, Նախիջևանի եւ Հայաստանի կազմուղի եւ ուժանիւթի համակարգի խնդիրներու կապակցութեամբ եւ ստորադրուած է երկկողմանի արձանագրութիւն: Յաջորդ հանդիպումը տեղի կ'ունենայ Հոկտեմբեր 2-ին, Զանգեւանի շրջանը:

Շատ ծանր է նաեւ վառելանիւթի տաղնապը եւ այս ամբողջին վրայ կանխահաս ձիւնն ալ ոչինչ կը դիւրացնէ: Արդարեւ, Շարաթ օր մինչ ցուրտ էր ու անձրեւ կը տեղար Երեւան, անդին, հազիւ 50 քիլոմէթր հեռաւորութեամբ կը ձիւնէր (Վարդենիս, Արագած, Սեւան, Կրասնոսելյակ եւ այլ շրջաններ):

Երկուշաբթի (Սեպ. 28) երբ կը խօսէինք Երեւանի հետ, օդը մեղմացած էր, բայց, հացի հարցը մեծ մտահոգութիւն կը պատճառէր:

Մնաց որ Հիւսիսային Օսէթիոյ տարածքէն Հայաստան հասնող կազի մատակարարումն ալ դադարած էր կարճ շրջանի մը համար: Արդարեւ հարկ է մաքրել կազամուղ խողովակները եւ այս աշխատանքը կը պահանջէ 7-10 օր: Մինչ այդ դարձեալ սկսած է կիրարկուիլ ելեկտրականութեան 12-ժամեայ հերթական խզումներու դրութիւնը՝ 6 ժամ առտուն, 6 ժամ գիշերը:

Ալմա - Աթալի բանակցութեանց Հայաստանի կողմէ նախագահի իբր ներկայացուցիչ մասնակցած Դաւիթ Շահնազարեան հեռատեսիլէն ելոյթ ունենալով անդրադարձած է հրադադարի վերջին համաձայնութիւններուն եւ ըսած թէ՝ Ազերիները խախտած են հրադադարը համաձայնագրի ստորագրումէն անմիջապէս յետոյ լայնածաւալ յարձակումներու ձեռնարկելով եւ թէ այս երեւոյթը Ղարաբաղի ժողովուրդը թերահաւատութեան կը մղէ հրադադարներու կիրարկումի տեսանկիւնէն: Իսկ Հայաստանի մէջ այն կարծիքը կը տիրէ թէ հրադադարը իրագործելի չըլլար եւ ոչ ալ բանակցութիւնները՝ արդիւնաւէտ, այնքան ատեն որ Ղարաբաղի իշխանութեանց կը մերժուի տեսակցութիւններուն մասնակցիլ: Միւս կողմէ 1,2-ի ինքնապաշտպանութեան կոմիտէի նախագահ Սերժ Սարգսեան, Ռուսաստանի Պաշտպանութեան նախարար, բանակի հրամանատար Կրաչովին նամակ մը զրկած է, ուր կ'ըսուի թէ Սոչիի հրադադարի համաձայնագրին դժով ինք պատրաստ է կրակը դադարեցնելու հրահանգ տալ իր ուժերուն, պայմանաւ որ հաստատուի Ազրբեջանի Պաշտպանութեան նախարարին նոյնանման հրահանգը:

ՀՐԱԴԱԴԱՐԸ ԵՒ ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԸ

Սոչիի հրադադարին առնչութեամբ, կը Մոնտի մէջ Սոֆի Շիհասպ կը գրէ թէ ան թերեւս նուազ վերացական ըլլայ քան նախորդները, քանի Ղարաբաղէն ալ ներկայացուցիչ մը եկած էր Ուրբաթ օր, Մոսկուա բացուած բանակցութիւններուն մասնակցելու: Գալով, Բորիս Թումանովի, Սեպ. 25-ի Լիպր Պելժիէի մէջ բաւական հետաքրքրական վերլուծում մը կ'ընէր շեշտելով թէ ոռւս զինուորականները վճռած են յաջողիլ հոն ուր ձախողեցան միջադաջին մարմինները: Հրադադարին պիտի յաջորդէ ՀԱՊ-ի երկիրներու դէտերու բազմազգի խումբ մը: Ազրբեջան առաջին անգամ ըլլալով ընդունելու է Ղարաբաղ ալ կիրարկել հրադադարը եւ այս ըրեր է Ռուսաստանի Պաշտպանութեան նախարար՝ զօր. Կրաչեւի ճշշումին տակ: Այս դիրքը կը նկատուի որպէս խստացում մը Բաքուի նկատմամբ: Միւս կողմէ, Լիտեքատուրնայա մամբ: Միւս կողմէ, Լիտեքատուրնայա կազետա-ի համաձայն, եւ ըստ «զազտնի ազրիւրներու», ազերի բանակը 5 հազար զինուորականներով զեկաւարուած է եւ թուրք սպաներով զեկաւարուած է եւ կանոնաւոր կերպով մեծաքանակ զինամթերք կը ստանայ խորհրդային ծաղում ունեցող, զոր թուրքիա ղնած էր նախկին Արեւելեան Գերմանիայէն:

Ռուսաստանի ձայնասփիւռէն եւ հեռատեսիլէն հաղորդած են թէ ոռւս սահ-

Վերջին օրերուն Երեւան լուրեր տարածուած էին այն մասին թէ սիւլիբախտի պարագաներ նկատուած են. այդ կասկածով ալ 8 հոգի Երեւանի նեխային հիւանդանոցը փոխադրուած էին: Անոնք բոլորն ալ Միսիանի շրջանի «Հայելեկորբամեքենայ» միւսուրման վաճառած միսին կերած էին: Բարեբախտաբար Առողջապահութեան նախարարութիւնը փարատած է այս կասկածները եւ պատահարը վերադարձ՝ պարզ վիրիւսի մը, որու պատճառն է անորակ միսը:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՅՐԱՆՍՍՅՈՒ ԾԵՐԱԿՈՅՏԻՆ մասնակի ընտրութիւնները նորութիւն բերելով հանդերձ մեծ փոփոխութիւններ չբերին: Երեք տարին անգամ մըն է որ ծերակուտականներու մէկ երրորդը կը նորոգուի: 108-ի վրայ 43 նորեր կը մտնեն Ծերակուտ: Ասոնց մէջ են՝ Միշէլ Շառաս (Պիւտեհի նախարար), Ժան - Մարի Ռօշ (պատուիրակ-նախարար Առեւտուրի), Փիէր Մօռուա: Նախարարները պարտին թողուլ իրենց կառավարական աթոռը: Ընկերակարական կուսակցութիւնը ըզգալի յառաջդիմութիւն մը կ'արձանագրէ հինգ նոր ընտրեալներով որ 71-ի կը հասցընէ իր թիւը: ԷՍ - Փէ - ԷՍ-ը տեղաջլ կ'ընէ, գլխաւոր զոհը համայնավար կուսակցութիւնը կը նկատուի, որ միայն մէկ աթոռ կ'կորսնցնէ (4-ի վրայ), բայց թիւը 15-էն 14-ի կ'իջնէ ինչ որ արգելք է խորհրդարանական խմբակի մը ղոյութեան: Ուրբաթ օր, պէտք է ընտրուի նախագահ Ալէն Փոհէրի (83 տարեկան) յաջորդը: Ինք այլեւս թեկնածու չէ, այդ աթոռը կը գրաւէ 1968-էն ի վեր եւ իբր Պետութեան Բ. անձը, երկու անգամ ապահոված է Հանրապետութեան նախագահութիւնը, փոխանցման շրջանի մը համար (տը Կօլ եւ Փոնսիխու):

ՓՈԹՈՐԻԿՆԵՐԸ չզաղրեցան Հարաւային Ֆրանսայի որոշ շրջանները: Շարաթ զիջեր գլխաւորաբար Օտի եւ Արեւելեան Փիլիքնեաններու նահանգները տուժեցիլ եւ հոն ալ զոհեր կան, ինչպէս Վէյզոն Լա - Ռոմէն, ուր միակ զիմացողը՝ հոռ մէկական կամուրջն էր, շինուած Քրիստոսէ 2 դար առաջ: Սեպ. 28-ին մեռեալներու թիւը հասած էր 36-ի եւ քսանէ աւելի անհետացածներ կան:

ԱՂՐԲԵՋԱՆ որոշած է նոր տեսանկիւնու սկիզբէն զրել իր պատմութիւնը, քան որ մինչեւ այսօր ան գրի առնուած էր համայնավարներուն փախաբաժ ձեւով: Ժողովրդական ձախատի արտաքին յարաբերութիւններու պատմարան պատասխանատուն որ դարմիկն է նախագահ Էլչիպէյլ ըսած է թէ այս գործին համար մեծ ժանդակութիւն կ'ակնկալեն Թուրքիայէն Պատմարան Միր ձէլալ Թուրան Անգարի մէջ մասնակցած է Թուրք պատմադատական Հիմնարկի ժողովին, ապա յատարարած թէ Ազրբեջան քաղաքական մշակութային մարզերուն մէջ կը պարաստուի լուրջ զարգացումներու որո-